

Երևանի Ավան համայնքում իրականացվող կենտրոնացված ջերմամատակարարման վերականգնման ծրագիր

Ծրագրի նախապատմությունը

2006 թ. հունիս	ՌԴ «Եվրոսիբէներգո ինժիներիգ» ՍՊԸ -ի կողմից Երևանի քաղաքապետարան ու ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով է ներկայացվել Ավան համայնքում համակցված արտադրության տեղակայանքի կիրառմամբ կենտրոնացված ջերմամատակարարման վերականգնման ներդրումային ծրագրերի տեխնիկատնտեսական հիմնավորում, որն արժանացել է այդ գերատեսչությունների հավանությանը:
2006թ. օգոստոսի 3	Երևանի քաղաքապետարանին հանձնարարվեց Ավան համայնքի կենտրոնացված ջերմամատակարարման համակարգերի գույքն անհատույց օգտագործման հանձնել թաղային համայնքին՝ դրանք հետագայում համատեղ ստեղծվող առևտրային ընկերությանը փոխանցելու նպատակով ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի թիվ 30 և օգոստոսի 31-ի թիվ 34 արձանագրային որոշումները
2006թ. օգոստոսի 23	Ավան համայնքում ջերմամատակարարման վերականգնման ծրագրի իրականացման նպատակով ստեղծվեց «ՀայՌուսկոգեներացիա» ՀԶ ՓԲԸ-ն
2006թ. սեպտեմբերի 8	Ջերմամատակարարման գույքը հանձնվեց Ավանի քաղապետարանին Երևանի քաղաքապետի 08.09.2006թ. թիվ 1454-Ա որոշում

Ծրագրի իրականացման ներկա վիճակը

2007-2008թթ. ջեռուցման սեզոնում նախատեսվում է.

- Վերականգնել Ավան համայնքի Դ.Վարուժան թաղամասի 3 բազմաբնակարան բնակելի շենքերի կենտրոնական ջերմամատակարարումը,
 - նախատեսվում է վերակառուցել թիվ 3/4 ԿՁՀ-ն
 - տեղադրել 2 ջրատաքացուցիչ կաթսա՝ յուրաքանչյուրը 1.1 ՄՎտ հզորությամբ:
 - Ներբնակարանային ջերմային ուղղաձիգ բաշխման ներքին ցանցերը վերակառուցել հորիզոնական տարբերակով
Ուսումնասիրություններից պարզվել է, որ 108 բնակարանից 10-ը՝ փակ է, 26-ում տեղադրված են բնակարանային կաթսաներ:
Պոտենցիալ սպառողների թիվը՝ 72 բնակարան:
- Դ. Վարուժան թաղամասի 3 բնակելի շենքերի կենտրոնական ջեռուցման և տաք ջրամատակարարման վերականգնման շինարարական աշխատանքների կատարման նպատակով կնքվել են հետևյալ պայմանագրերը.

- Շինարարություն իրականացնող գլխավոր կապալառուի՝ «Ինտերկապալ» ՍՊԸ-ի հետ,
- տեխնոլոգիական սարքավորումներ մատակարարող, մոնտաժող և թողարկող կազմակերպության՝ «Կ և Կ» ՍՊԸ-ի հետ:

ՄԱԶԾ/ԳԷՖ Ծրագրի կողմից.

- մշակվել է բնակիչների հետ կնքվելիք ջերմային էներգիայի մատակարարման պայմանագրի օրինակելի ձև
- տեղեկանք կենտրոնացված ջերմամատակարարման վերականգնման ծրագրի մասին բնակիչների շրջանում բացատրական աշխատանք տանելու և նրանց իրազեկելու համար:

«Հայրուսկոգեներացիա» ՀԶ ՓԲԸ-ի տնօրինության խնդրանքով արագացված կարգով ձեռք կբերվի.

- ջերմային էներգիայի բնակարանային ծախսաչափեր
- ջերմային էներգիայի շենքային ծախսաչափեր
- կաթսայատանը տեղադրվող ջերմային էներգիայի ծախսաչափ
- տաք ջրի բնակարանային հաշվիչներ
- տաք ջրի շենքային հաշվիչներ

ՄԱԶԾ-ի տարածաշրջանային կենտրոնին ներկայացվել է հայտ Կիոտոյի արձանագրության Մաքուր զարգացման մեխանիզմով (ՄՁՄ) Երևան քաղաքի ջերմամատակարարման վերականգնման առաջնեկային նախագծի հիմնավորման փաստաթղթերի մշակման տեխնիկական աջակցության համար:

ՄՁՄ ծրագրի ներքո Ընդունող երկրում իրականացվող ՋԳ արտանետումների կրճատման գործողությունների մշակմանը և իրականացմանն օժանդակման նպատակով պատրաստվում է Փոխըմբռնման հուշագրի ստորագրում Միավորված Ազգերի Կազմակերպության Զարգացման Ծրագրի և Հայաստանի Հանրապետության միջև:

Նախագծի իրականացման դեպքում, ածխածնի երկօքսիդի նվազեցման չափը կկազմի շուրջ 37000 տ/տարի, որն էլ կբերի շուրջ 370000 եվրո/տարի ֆինանսական լրացուցիչ եկամուտներ: